ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Արսեն Կարենի Սարգսյան

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԳԵՐԱԿԱ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2018

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում

	ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս
Գիտական ղեկավար՝	տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Յուրի Միքայելի Սուվարյան**
Պաշտոնական ընդդիմախոսներ՝	տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Արարատ Եղիշեի Զաքարյան**
	տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Վիլեն Վիկտորի Խաչատրյան**
Առաջատար կազմակերպություն՝	**Երևանի պետական համալսարան**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2018 թ. հունիսի 7-ին, ժամը 14^{00}-ին Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի տնտեսագիտության 014 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 0025, Երևան, Մ. Նալբանդյան փող., 128:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2018 թ. մայիսի 7-ին:

014 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար,
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Ս. Ա. Գևորգյան**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը

Զարգացման փուլում գտնվող շատ երկրների կողմից դեռևս ամբողջովին տարանջատված չեն էական այն տարբերությունները, որոնք առկա են պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունում: Բազմաթիվ հարցեր, որոնք օրենսդրորեն վերապահված չեն պետական իշխանությանը, կարող են լուծվել ՏԻՄ-երի միջոցով:

Այս առումով, ՏԻՄ-երը ամբողջացնում են հասարակության մեջ պետաիրավական համակարգի գործունեությունը: Այսօր առկա են հանրային կյանքի տարաբնույթ հիմնախնդիրներ, որոնք կարող են իրենց արդյունավետ լուծումը ստանալ միայն տեղական ինքնակառավարման տիրույթում:

Հետազոտության թեմայի արդիականությունը պայմանավորված է նրանով, որ այսօր Հայաստանի Հանրապետությունում իրականացվում են վարչատարածքային և տեղական ինքնակառավարման համակարգային բարեփոխումներ, և հետևաբար անհրաժեշտություն է առաջացել դիտարկել պետության կողմից իրականացվող այդ բարեփոխումների արդյունքները և վեր հանել համակարգային ձեռքբերումները, բացերն ու սխալները, պարզել այդ բարեփոխումների արդյունավետության աստիճանը, առաջարկելով տեղական ինքնակառավարման արդյունավետության բարձրացմանը նոր գերակա ուղղությունների և դրանցով պայմանավորված գործիքակազմերի միջոցով:

Հայաստանի Հանրապետությունում 2015 թվականին ընդունված Սահմանադրության փոփոխությունները զարկ տվեցին սահմանադրական կարգավորումների գործընթացի հիմնախնդիրների համալիր գիտական ուսումնասիրությանը, որից անմասն չի մնացել տեղական ինքնակառավարման համակարգը, դրա զարգացման ուղղություններն ու հեռանկարները, առկա խնդիրների վերլուծությունն ու վերհանումը, և դրանց լուծման համար համապատասխան առաջարկությունների ներկայացումը:

Նշվածից հետևում է, որ տեղական ինքնակառավարման արդյունավետության բարձրացումը կարևոր ու գործնական նշանակություն ունի Հայաստանի համար, որն էլ կանխորոշում է ատենախոսության թեմայի ընտրությունը, դրա արդիականությունը և նշանակությունը:

Հետազոտության նպատակը և խնդիրները

Հետազոտության նպատակն է տեղական ինքնակառավարման համակարգի ուսումնասիրությունների, դրանում կատարվող բարեփոխումների ընթացքի և արդյունքների հիման վրա՝ տվյալ ոլորտի բարելավման ուղիների, մոտեցումների և զարգացման նոր գերակայությունների մշակումը: Նշված նպատակի իրականացման համար աշխատանքում առաջադրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- Ուսումնասիրել և վերլուծել Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման համակարգը, օրենսդրահիրավական և տեսամեթոդաբանական հիմքերը.
- Բացահայտել և գնահատել ՀՀ-ում տեղական ինքնակառավարման համակարգի արդի վիճակն ու դրա առանձնահատկությունները.
- Ուսումնասիրել տեղական ինքնակառավարման համակարգի գործունեության արդյունավետության գնահատմանը վերաբերող կառուցակարգերը և գործիքակազմերը.
- Վերլուծել տեղական ինքնակառավարման արդյունավետության գնահատման մեթոդաբանության միջազգային փորձը և ՀՀ-ում դրա տեղայնացման հնարավորությունները.
- Վերլուծել և գնահատել Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման համակարգի գործունեության արդյունավետությունը.
- Վերլուծել և գնահատել Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման և տեղական ինքնակառավարման համակարգի բարեփոխումների ընթացքը, ինչպես նաև համակարգի զարգացման հնարավորությունները և միտումները.
- Հիմնավորել տեղական ինքնակառավարման արդյունավետության բարձրացմանը միտված գերակա ուղղությունները, ինչպես նաև ինստիտուցիոնալ բարեփոխումների մոտեցումները:

Հետազոտության օբյեկտը և առարկան:

Հետազոտության օբյեկտը Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման համակարգն է՝ իրեն յուրահատուկ առանձնահատկություններով և բնութագրիչներով:

Հետազոտության առարկան Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման համակարգում ձևավորված կառուցակարգերի, ոլորտի արդյունավետության բարձրացման ուղղությունների, իրականացվող բարեփոխումների տնտեսա-իրավական հարաբերությունների ամբողջությունն է:

Հետազոտության տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը:

Հետազոտության տեսական և մեթոդաբանական հիմք են հանդիսացել տեղական ինքնակառավարման ոլորտի հայրենական և արտասահմանյան գիտական հրապարակումները, ՀՀ-ում տեղական ինքնակառավարման ոլորտը կարգավորող օրենքները և նորմատիվ իրավական այլ ակտերը:

Հետազոտության ընթացքում կիրառվել են տնտեսավիճակագրական, կառուցվածքային և համակարգային վերլուծությունների մի շարք մեթոդներ:

Հետազոտության գիտական նորույթը

Հետազոտության արդյունքները իրենց բնույթով ունեն տեսական, մեթոդական և կիրառական ուղղվածություն, որոնց գիտական նորույթը հետևյալն է.

1. Ընդհանրացվել է Հայաստանի Հանրապետությունում տեղական ինքնակառավարման համակարգի ձևավորման ընթացքը և բացահայտվել դրա զարգացման միտումներն ու առանձնահատկությունները:
2. Հաշվի առնելով միջազգային փորձը՝ ճշգրտվել է տեղական ինքնակառավարման արդյունավետության գնահատման համաթիվը, որով հաշվարկվել է ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգի գործունեության արդյունավետությունը 2015-2016թթ.-ին:
3. Հիմնավորվել և առաջարկվել է տեղական ինքնակառավարման իրավունքի պատշաճ իրացմանը միտված անհրաժեշտ փոխանցվող լիազորությունների համալիր շարքը:
4. Մշակվել են տեղական ինքնակառավարման համակարգում մասնակցային կառավարման համապատասխան կառուցակարգեր՝ վարչատարածքային բարեփոխումների պատշաճ կազմակերպման ու իրականացման, ինչպես նաև սահմանադրական նորմի լիարժեք իրացման նպատակով և առաջարկվել ոլորտը կարգավորող «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքով սահմանել համայնքների կարծիքը լսելու համապատասխան տարբերակներ:
5. Համայնքների խոշորացման համատեքստում մշակվել են հանրային նշանակության նոր լրացուցիչ ծառայություններ մատուցելու կառուցակարգեր, որոնց կիրառման արդյունքում հնարավոր կլինի մեծացնել համայնքի կողմից մատուցվող հանրային ծառայությունների շրջանակը և դրանց հասանելիությունը:

Հետազոտության արդյունքների գիտագործնական և կիրառական նշանակությունը: Ատենախոսությամբ ամրագրված տեսական և մեթոդական դրույթները, հետազոտությունների արդյունքներով կատարված վերլուծությունները, եզրահանգումներն ու առաջարկությունները կարող են կիրառվել տեղական ինքնակառավարման ոլորտի և առհասարակ համակարգի հետագա զարգացման նպատակներով, ինչպես նաև գիտաուսումնական գործընթացներում:

Ատենախոսությունում ներկայացված առաջարկությունները կարող են նպաստել իրականացվող վարչատարածքային բարեփոխումների պատշաճ կազմակերպմանը և իրականացմանը, ՀՀ տեղական ինքնակառավարման արդյունավետության բարձրացմանը և կառավարման կատարելագործմանը:

Հետազոտության փորձարկումը և հրապարակումները: Հետազոտության առանցքային դրույթները քննարկվել և հավանության են արժանացել ՀՊՏՀ կառավարման ամբիոնում: Ատենախոսության հիմնական արդյունքները հրապարակվել են վեց գիտական հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություն և առաջարկություններ բաժնից, օգտագործված գրականության ցանկից: Աշխատանքը շարադրված է 134 էջի վրա,

ներառյալ գրականության ցանկը: Աշխատանքում ներառված են 8 գծանկարներ, 2 գծապատկերներ, 1 աղյուսակ, ինչպես նաև աշխատանքին կից ներկայացված են 5 հավելվածներ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորվում է թեմայի արդիականությունը, սահմանվում են հետազոտության նպատակը և խնդիրները, ներկայացված հետզոտության օբյեկտը և առարկան, տեսական և տեղեկատվական հիմքերը, գիտական նորույթը, ինչպես նաև ստացված արդյունքների գիտագործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ ***«Տեղական ինքնակառավարման համակարգը և դրա արդյունավետության գնահատման մեթոդաբանությունը»*** գլխում քննարկված տեղական ինքնակառավարման համակարգը և նրա առանձնահատկությունները, տեղական ինքնակառավարման արդյունավետության գնահատման մեթոդաբանության միջազգային փորձը:

Տեղական ինքնակառավարումը տեղական ինքնակառավարման մարմինների իրավունքն ու կարողությունն է՝ համայնքի բնակիչների շահերից ելնելով, Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան, սեփական պատասխանատվությամբ լուծելու համայնքային նշանակության հանրային հարցերը[1]:

Տեղական ինքնակառավարման էությունը բնակավայրի քաղաքացու այնպիսի իրավունքի ճանաչումն է, որով վերջինս կլինի իշխանության աղբյուր, առօրյա հարցերում ինքնուրույն որոշումներ կընդունի և ինքն էլ պատասխանատվություն կկրի դրանց հետևանքների համար[2]:

Հայաստանի Հանրապետությունում տեղական ինքնակառավարման համակարգի ներդրման արդյունքում համայնքի բնակիչները հնարավորություն են ստացել նաև ուղղակիորեն մասնակցություն ունենալ տեղական ինքնակառավարման գործընթացին՝ հանրային հարցերը տեղական հանրաքվեով լուծելու միջոցով: Տեղական հանրաքվեի կազմակերպման և անցկացման կարգը սահմանվում է «Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքով:

Արդյունքում՝ անմիջական ժողովրդաիշխանությունը տեղական ինքնակառավարման համակարգում իրականացվում է համայնքներում ապրող բնակչության անմիջական կամահայտնության ամենատարբեր ձևերով և միջոցներով: Այդպիսի ձևեր են համարվում տեղական հանրաքվեն, ընտրությունները, հավաքները, բնակչության ժողովները և մի շարք այլ կազմակերպական ձևեր, որոնց միջոցով ապահովվում է տեղական ինքնակառավարման համակարգի կարևորագույն տարրերի՝ ինքնակառավարման մարմինների գործունեության կազմակերպումը: Այս առումով, կարելի է ասել, որ տեղական ինքնակառավարման գործնական իրականացման

---

[1] ՀՀ Սահմանադրություն, 06.12.2015թ., ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկ թողարկում, հոդված 179

[2] Бабун Р. В. “Организация местного самоуправления”, С.Петербург, 2005, стр. 10

ընթացքում ժողովրդաիշխանության անմիջական և ներկայացուցչական ձևերը սերտորեն միահյուսված են՝ լրացնելով միմյանց:

Հետազոտողի կողմից ուսումնասիրվել է տեղական ինքնակառավարման համակարգի գնահատման միջազգային փորձը, որում դիտարկվել են այդ փորձի բազմազանությունը և նպատակները: Ուսումնասիրությունների արդյունքում բացահայտվել են, որ մի շարք երկրներում առկա են գործուն կառուցակարգեր, որոնք նպատակ ունեն գնահատելու տեղական ինքնակառավարման արդյունավետությունը: Ատենախոսի կողմից հետազոտության առաջին գլխում ներկայացվել է տեղական ինքնակառավարման արդյունավետության գնահատման ինդեքսավորման մեթոդաբանությունը: Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ինդեքսավորման գործընթացները հիմնականում տարբերվում են ըստ գնահատման երկու մոտեցումների[3].

- ինդեքսավորումը վերաբերում է ՏԻ առանձին մեկ կամ մի քանի միավորների, բնագավառների կամ խնդիրների (օրինակ՝ վստահությունը ՏԻՄ-երի նկատմամբ, ՏԻՄ-երի հաշվետվողականությունը և այլն),
- ինդեքսավորումը վերաբերում է ՏԻ ամբողջ համակարգի համապարփակ գնահատմանը:

Ըստ միջազգային փորձի գոյություն ունեն կառավարման չափորոշիչների հավաքագրման, վերլուծության, ինչպես նաև տեղեկատվության ներկայացման մի շարք եղանակներ: Դրանք սկսվում են հասարակ քարտային սանդղակից, մինչև ինդեքսավորում: Յուրաքանչյուրն ունի իր առավելությունները և թերությունները: Տեղական ինքնակառավարման արդյունավետությունը հաշվարկվում է հիմնականում հետևյալ ինդեքսների մեթոդաբանության կիրառմամբ.

- քաղաքային կառավարման ինդեքս,
- տեղական ինքնակառավարման բարոմետր,
- կառավարման ինդեքս,
- տեղական ինքնակառավարման զարգացման ինդեքս:

Քաղաքային կառավարման ինդեքսը մշակվել է որպես շահերի պաշտպանության և կարողությունների զարգացման գործիք՝ ՄԱԿ-ի հովանու ներքո: Այն օգտագործում է հիմնականում օբյեկտիվորեն հավաստի աղբյուրներից ստացված հանրորեն մատչելի տեղեկատվությունը. ազգային և քաղաքային վիճակագրություն և կարգավորումներ, բնակչության վերաբերյալ հասանելի վարչական տվյալներ, բյուջե և ընթացակարգեր:

Տեղական ինքնակառավարման բարոմետրը ստեղծվել է 2005 թվականին՝ Հարավ-Աֆրիկյան հանրապետության Պրետորիայի տեղական ինքնակառավարման լաբորատորիայում[4]: ՏԻԲ-ի հիմնական նպատակն է՝ նկարագրել, վերլուծել և հասկանալ տեղական ինքնակառավարման ընթացքում առաջացող խնդիրները և ապահովել

---

[3] Alexandra Wilde, Shipra Narang, Marie Laberge, Luisa Moretto - A Users guide to measuring local governance,UNDP,2008, p.6

[4] Evan Bloom, Amy Sunseri, Aaron Leonard - Measuring and Strengthening Local Governance Capacity: The Local Governance Barometer, 2007

պատշաճ տեղական ինքնակառավարում և ծառայությունների մատուցում: Գործիքը կիրառելու պարագայում այն ծառայում է և՛ որպես գնահատման միջոց, և՛ տեղական մակարդակում ժողովրդավարական երկխոսությունների ապահովում:

Կառավարման ինդեքսը [5] ստեղծվել է Ինդոնեզիայում տարածաշրջանային ինքնավարության քաղաքականության և ապակենտրոնացման գործընթացի համատեքստում, երբ դրանց հետևանքով տեղական ինքնակառավարման որակի մի շարք փոփոխություններ էին տեղի ունեցել: Այն կազմված է 4 ոլորտներից, 8 գործառույթներից, 6 սկզբունքներից և 75 ցուցիչներից:

Տեղական ինքնակառավարման զարգացման ինդեքսը ստեղծվել է Ֆիլիպիններում[6]: Այս ինդեքսի հաշվարկման համար վերցված ցուցիչները ընտրվել են տեղական ինքնակառավարման ճշգրիտ գնահատման նպատակով: ՏԻԶ ինդեքսը 3 ցուցիչների միջինացված թիվն է՝ զարգացման կարիքների ինդեքսի, զարգացման ուղիների ինդեքսի և մասնակցային զարգացման ինդեքսի (համաթվի): Նրանցից յուրաքանչյուրը ներառում է 10 ցուցիչներ: Յուրաքանչյուր ցուցիչ տրամադրում է արդյունք, որը 0-1 միջակայքում ստացված թիվ է (0-բացակայում է, 1-առկա է):

Ատենախոսության երկրորդ՝ ***«Տեղական ինքնակառավարման համակարգի գործունեության արդյունավետությունը»*** գլխում ներկայացվում են Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման և տեղական ինքնակառավարման համակարգի բարեփոխումները, դրանց իրականացմամբ պայմանավորված ռիսկերը, ինչպես նաև, Հայաստանի տեղական ինքնակառավարման համակարգի արդյունավետության վերլուծությունը, ատենախոսի կողմից մշակված տեղական ինքնակառավարման գնահատման համաթիվը և այն Հայաստանում կիրառելու անհրաժեշտությունը ու ակնկալվող հնարավոր արդյունքները:

Ատենախոսի կողմից անդրադարձ է կատարվել տեղական ինքնակառավարման համակարգի ձևավորման և զարգացման գործընթացներին, որոնք պայմանականորեն նրա կողմից բաժանվել են երեք փուլերի: Առաջին փուլում նկարագրվել է 1995թ. Սահմանադրության ընդունմամբ պայմանավորված տեղական ինքնակառավարման ինստիտուտի ձևավորումը և վարչատարածքային ռեֆորմը: Որպես տեղական ինքնակառավարման համակարգի զարգացման երկրորդ փուլ՝ նախանշվել է 2005թ. Սահմանադրության փոփոխությունները և դրան հաջորդող տասը տարիները, իսկ զարգացման երրորդ փուլը դիտարկվել է 2015թ. Սահմանադրության փոփոխությունները և դրանով պայմանավորված համակարգային, ինստիտուցիոնալ և վարչատարածքային բարեփոխումները:

Հեղինակը՝ ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգը բնութագրելիս նկատի է առել հետևյալ մի քանի կարևոր հիմնական բնութագրիչները.

- ՏԻՄ-երի լիազորությունները և դրանց քանակական ցուցանիշը,

---

[5] Paul Taylor, Mohamed Halfani, Urban Governance Index, 2004

[6] Joseph J. Capuno, Ma. Melody S. Garcia and Janette S. Sardalla - Promoting Local Development Through Good Governance: A Partial Assessment of the GOFORDEV INDEX, 2001

- Լիազորությունների ապակենտրոնացման մակարդակը,
- Տեղական ինքնակառավարման կազմակերպական և ֆինանսատնտեսական ինքնուրույնությունն ապահովող երաշխիքները,
- Համայնքի սեփականությունը և դրա կառավարումը,
- Համայնքի բյուջեն և ռազմավարական զարգացման ծրագրերը,
- Բնակիչների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը,
- Միջհամայնքային համագործակցությունը,
- ՏԻՄ-եր - պետություն փոխհարաբերությունները:

Տեղական ինքնակառավարման համակարգի արդյունավետության վերլուծության արդյունքների հիման վրա, ատենախոսը եզրահանգել է, որ տեղական ինքնակառավարման ինքնուրույնությունը հնարավոր է ապահովել միայն համապատասխան կազմակերպական և ֆինանսատնտեսական ինքնուրույնությունն ապահովող երաշխիքների առկայության պայմաններում, կարևոր ընդհանուր երաշխիք համարելով ՀՀ տեղական ինքնակառավարման օրենսդրությամբ ամրագրված ֆինանսատնտեսական բազան:

Տեղական ինքնակառավարման համակարգի արդյունավետությունը բարձրացնելու համար, հեղինակի կողմից առաջ է քաշվել այն գաղափարը, որով պահանջվում է ՏԻՄ-երին օրենքով տրված լիազորությունների իրականացմանը համարժեք ֆինանսական ռեսուրսներով ապահովելը, ինչպես նաև ՏԻՄ-երի ֆինանսական ինքնուրույնության ապահովումը՝ ֆինանսական քաղաքականության իրականացման հնարավորությունների ընձեռման և ընդլայնման պայմաններում:

Տեղական ինքնակառավարման արդյունավետության գնահատման նպատակով հետազոտողի կողմից կատարվել են ուսումնասիրություններ Հայաստանի Հանրապետությունում 2016-2017թթ. ընթացքում ձևավորված նոր խոշորացված թվով 18 համայնքներում [7], ինչպես նաև վերլուծվել է 2016-2017թթ. ընթացքում սեփական եկամուտների աճը, ուսումնասիրվել են 2018 թվականի համար պլանավորված տվյալները:

Ուսումնասիրությունների արդյունքում հետազոտողը արձանագրել է սեփական եկամուտների հավաքագրման և ավելացման մասով դրական աճ՝ բոլոր 18 խոշորացված համայնքներում: Սեփական եկամուտների աճը հեղինակը հիմնավորել է համայնքային գույքի ճիշտ և ռացիոնալ կառավարումով, համայնքային կազմակերպությունների կողմից ծառայությունների մատուցման որակով և դրանց շրջանակների մեծացումով, իհարկե նաև համայնքի կառավարումն իրականացնող մարմինների տեղական հարկերի, տուրքերի և վճարների հավաքագրման գործընթացի նկատմամբ հետևողական և պատասխանատու աշխատանքով:

Կատարված ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյունքում ատենախոսը կատարել է եզրահանգում, որ ընդհանուր առմամբ, համայնքների սեփական եկամուտների հավաքագրման արդյունավետությունը և դրա ծավալները

[7] http://www.mtad.am/, ՀՀ Տարածքային կառավարման և զարգացման նախարարության կայք

պայմանավորված են համայնքների սեփական եկամուտների հավաքագրման գործընթացին օժանդակող և աջակցող գործիքակազմերի և կառուցակարգերի ներդրմամբ, իսկ ծախսերի գծով կատարված վերլուծության արդյունքներով էական փոփոխություն համայնքների խոշորացման համատեքստում չի արձանագրվել:

Որպես համայնքային բյուջեի լիակատար ձևավորման և զարգացման համար մեծ խոչընդոտ, ատենախոսը դիտարկել է օրենքով նախատեսված հարկատեսակներից մասհանումների, ինչպես նաև հյուրանոցային հարկի գանձման հնարավորության բացակայությունը: Իրականում, համայնքների՝ այդ մասհանումներից օգտվելու իրավակարգավորումը սահմանված է օրենքով, բայց թերևս բացակայում է պետական քաղաքականության մոտեցումն ու դրսևորումը, որի փաստացի ապացույցը համապատասխան մասհանումներից օգտվելու կառավարության որոշման և այդ որոշմամբ սահմանվող կարգի բացակայությունն է: Ինչ վերաբերում է հյուրանոցային հարկին, ապա ըստ հեղինակի, այն որպես առանձին հարկատեսակ սահմանվել է «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքով և ՀՀ հարկային օրենսգրքով, բայց դեռևս չկա «Հյուրանոցային հարկի մասին» առանձին օրենք, որի բացակայությունը հնարավորություն չի ընձեռում կարգավորել այդ հարկատեսակի հետ կապված որևէ ընթացակարգային իրավահարաբերություն:

ՀՀ տեղական ինքնակառավարման արդյունավետությունը ներկայացնելու և վերլուծելու նպատակով «Համայնքների ֆինանսիստների միավորում» ՀԿ-ի փորձագիտական խմբի կողմից կատարվել են ուսումնասիրություններ[8] և դրա, ինչպես նաև միջազգային փորձի հիման վրա կազմվել է ՀՀ տեղական ինքնակառավարման 2015 և 2016թթ. գնահատման համաթիվը (այսուհետ՝ ՏԻԳՀ): Այդ աշխատանքներին մասնակցություն եմ ունեցել և կատարել եմ փորձագիտական ուսումնասիրություններ, վերլուծություններ և գնահատումներ: ՀՀ ՏԻԳՀ հաշվարկը կատարվել է ըստ ՀՀ ՏԻ 5 ուղղությունների (բնագավառների) և դրանցով պայմանավորված 22 ցուցչի: Որպես ՏԻ տարեկան գնահատման հիմնական բնագավառներ ընտրվել են ՏԻ գործունեության հետևյալ ընդհանրացված ուղղությունները.

- տեղական ինքնակառավարման բարեփոխումներ,
- համայնքի սեփականություն, զարգացման ծրագրեր և ֆինանսներ,
- տեղական ժողովրդավարություն,
- համայնքի կառավարում,
- համայնքային (հանրային բնույթի) ծառայությունների մատուցում:

Ըստ հեղինակի, ՏԻԳՀ հաշվարկումը նպատակ ունի հնարավորինս համապարփակ գնահատել ՀՀ ՏԻ համակարգի տարեկան գործունեությունը՝ ՀՀ կառավարությանը, ՏԻՄ-երին, քաղաքացիական հասարակությանը և այլ շահագրգիռ կողմերին տրամադրելով ՏԻ տարեկան գործունեության թվային գնահատականը, ինչպես նաև դասակարգել գնահատման արդյունքները՝ հիմնված ՏԻՄ-երի գործունեության առանձին

[8] Տեղական ինքնակառավարման տարեկան ինդեքս (ՏԻՏԻ), ՀՖՄ, ՀՌԿԿ, Հայաստան, Երևան, Վան Արյան, 2017թ., էջ 14

բնագավառների ու գործառույթների գնահատումների վրա, գնահատված արդյունքների հիման վրա, որոշելով համակարգի արդյունավետության մակարդակը երկու տարիների կտրվածքով:

Աղյուսակ 1

ՏԻԳՀ ամփոփ հաշվարկն ըստ տեղական ինքնակառավարման բնագավառների, 2015թ. և 2016թ.

Տի բարեփոխումներ			Համայնքի սեփականություն, զարգացման ծրագրեր և ֆինանսներ			Տեղական ժողովրդավարություն			Համայնքի կառավարում			Համայնքային (հանրային բնույթի) ծառայությունների մատուցում		
ՑՔ=4			ՑՔ=7			ՑՔ=4			ՑՔ=2			ՑՔ=5		
ՑՀՀ	*2015*	*2016*	*ՑՀՀ*	*2015*	*2016*	*ՑՀՀ*	*2015*	*2016*	*ՑՀՀ*	*2015*	*2016*	*ՑՀՀ*	*2015*	*2016*
1	7	6	5	3	3	12	4	5	16	6	6	18	4	4
2	4	4	6	2	2	13	6	6	17	6	6	19	3	3
3	4	4	7	3	3	14	6	6				20	1	2
4	5	5	8	0	0	15	2	2				21	6	6
			9	3	3							22	7	8
			10	2	2									
			11	2	2									
	5.00	4.75		2.14	2.14		4.50	4.75		6.00	6.00		4.20	4.60
ՏԻԳՀ 2015: **4.37**														
ՏԻԳՀ 2016: **4.45**														

Հետազոտության երրորդ՝ **«Տեղական ինքնակառավարման համակարգի արդյունավետության բարձրացման գերակայությունները»** գլխում դիտարկվել են արդյունավետության բարձրացմանը միտված գործիքները, բացահայտվել է դրանց կիրառելիության աստիճանը, ինչպես նաև արվել են եզրահանգումներ արդյունավետությունը բարձրացնելու գերակա ուղղությունների մասով:

Ատենախոսը որպես տեղական ինքնակառավարման համակարգի արդյունավետության բարձրացման գործիք դիտարկել է միջհամայնքային համագործակցությունը, որի արդյունքում բացահայտվել է ՀՀ-ում գործող միջհամայնքային համագործակցության ծավալները, համագործակցության առարկան, դրանցով պայմանավորված վեր է հանվել համակարգային և ինստիտուցիոնալ խնդիրները, ինչպես նաև կատարվել է առանձին վերլուծություն մեկ միջհամայնքային միավորման գործունեության արդյունավետության մասով: Որպես միջհամայնքային համագործակցության օրինակ, հետազոտողի կողմից ուսումնասիրվել է ՀՀ Արարատի մարզի «Վեդի» միջհամայնքային միավորման գործունեությունը և վերլուծվել միջհամայնքային միավորման տնտեսական արդյունավետությունը աղբահանության կատարման ծախսերի իրականացման տեսանկյունից: Ստորև ներկայացվում է 2014-

2017թթ. աղբահանության գծով մեկ բնակչի հաշվով կատարած ծախսերի աճը ըստ Արարատի մարզի Վեդի, Մասիս և Արտաշատ համայնքների:

Գծապատկեր 1

Մեկ բնակչի հաշվով աղբահանության գծով ծախսը 2014-2017թթ.



Գծապատկեր 1-ից ակնհայտ է՝ մեկ բնակչի հաշվով աղբահանության գծով Վեդի համայնքի ծախսը: Աղբահանության կազմակերպման և իրականացման նպատակով Վեդի համայնքի մեկ շնչին ընկնող ծախսերը էականորեն տարբերվում են մյուս երկու համայնքներից, քանի որ այն իրականացվում է միջհամայնքային միավորման շրջանակներում, իսկ մյուս երկուսի դեպքում իրականացվում է համայնքի կողմից: Այդ արդյունավետությունը պայմանավորված է հիմնականում մի քանի գործոններով, մասնավորապես՝ միանգամից մի քանի համայնքներում աղբահանությունը կազմակերպվում է միևնույն մեքենատրակտորային բազայի միջոցներով և միևնույն աշխատակազմի ուժերով, իսկ առանձին համայնքների դեպքում դրա համար սահմանվում են առանձին մեքենաշարժակազմեր և համապատասխան աշխատակազմեր: Մյուս կողմից, կոնկրետ «Վեդի» միջհամայնքային միավորման դեպքում թարմացված է մեքենատրակտորային համակազմը, որը հնարավորություն է ընձեռում քիչ վառելիքային և ավտոպահեստամասային ծախսերի արդյունքում կազմակերպել և իրականացնել ծառայության մատուցումը, մինչդեռ առանձին համայնքների դեպքում դեռևս ծառայություններ են մատուցում մաշվածության բարձր մակարդակ ունեցող աղբատար մեքենաները:

Անդրադառնալով տեղական ինքնակառավարման համակարգի արդյունավետության բարձրացման մեկ այլ ուղղությանը, ատենախոսը, որպես գերակայություն դիտարկել է վարչատարածքային բարեփոխումները, մասնավորապես՝ համայնքների խոշորացումը: Հետազոտողի կողմից ուսումնասիրվել են ՀՀ-ում իրականացված վարչատարածքային բարեփոխումների արդյունքները, դրանով պայմանավորված նոր ձևավորված համայնքների սեփական եկամուտները, նրանց

կողմից մատուցվող հանրային ծառայությունների շրջանակը, ինչպես նաև բացահայտվել են համայնքների խոշորացման նպատակով կիրառված «փնջային» և «շրջանային» տարբերակների կիրառմամբ առաջացած հարցերն ու խնդիրները:

Հետազոտությունում բացահայտվել է, որ ի տարբերություն համայնքների միավորման փնջային տարբերակի, համայնքների միավորման շրջանային տարբերակի կիրառումը երբեմն եղել է չհիմնավորված, որի կիրառման արդյունքում հանրապետությունում ձևավորված են արդեն խոշորացված մի քանի համայնքներ, որոնք իրենց կազմում ունեն երեք տասնյակից ավելի բնակավայրեր:

Նշանակալի, սակայն համեմատաբար թույլ է համայնքների խոշորացման արդյունքում իրականացվող ֆինանսատնտեսական և ներդրումային քաղաքականության ազդեցությունը նոր ձևավորված համայնքների կայուն զարգացման ապահովման իմաստով: Այնուհանդերձ, հետազոտողի կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքում, պարզվել է, որ համայնքների եկամուտների աճը հիմնականում գրանցվել է 2015-2017 թվականներին: Մասնավորապես՝ նշված տարիներին եկամուտը հասել է շուրջ 54 մլրդ. դրամի, մինչդեռ 2013 թվականի այդ ցուցանիշը կազմել է 42 մլրդ. դրամ:

Փաստորեն հինգ տարիների դինամիկան ցույց է տալիս, որ համայնքների եկամուտները ավելացել են 12 մլրդ. դրամով, որում սեփական եկամուտների մասնաբաժինը կազմել է 5 մլրդ դրամ:

Գծապատկեր 2-ից հստակ երևում է, որ հինգ տարիների կտրվածքով ավելացել են համայնքների եկամուտները, սակայն շատ ցածր է դրանում սեփական եկամուտների մասնաբաժնի ցուցանիշը:

Ըստ հետազոտողի նշված խնդիրը պայմանավորված է սեփական եկամուտների քիչ թվով աղբյուրների հետ, մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետությունում գործող հարկատեսակներից ընդամենը երկու հարկատեսակի վերապահումը համայնքային մակարդակին:

Գծապատկեր 2

ՀՀ համայնքների եկամուտների պատկերը 2013-2017թթ. ընթացքում



Ատենախոսը եկել է այն եզրահանգման, որ համայնքների միավորման արդյունքում կրճատվել են մեծ թվով համայնքային հաստիքներ, սակայն ծախսերի նվազում չի արձանագրվել, ըստ էության այն պայմանավորված է եղել համայնքների միավորման արդյունքում հաստիքների կրճատման հետևանքով աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատակիցներին աշխատավարձի վերջնահաշվարկների կատարմամբ և տրամադրմամբ, որոնք էական կշիռ են ունեցել աշխատավարձի գծով գործառնական դասակարգման ծախսերում:

Միաժամանակ հետազոտողի կողմից բացահայտվել է ծառայությունների և ապրանքների ձեռքբերման գծով ծախսերը 2013 թվականի համեմատությամբ՝ 2017 թվականին ընդհանուր ծախսերի հանրագումարում կազմելով 19 տոկոս և ըստ այդմ եզրահանգվել է, որ Հայաստանի Հանրապետության համայնքների ընդհանուր ծախսերի շրջանակներում փոքր է ծառայությունների մատուցման գծով իրականացված ծախսերի տեսակարար կշիռը:

Գծապատկեր 3

ՀՀ համայնքների ծախսերի պատկերը ըստ գործառնական դասակարգման 2013-2017թթ. Ընթացքում



Ատենախոսության երրորդ գլխի վերջում հետազոտողը վերլուծել է ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգում ապակենտրոնացման, այդ թվում ֆիսկալ և վարչական ապակենտրոնացման առկա վիճակը, ինչպես նաև զուգահեռ տանելով համայնքների խոշորացման գործընթացի հետ, ամբողջացրել է լիազորությունների համալիր շարքը, որոնց փոխանցումը, ըստ հետազոտողի, կարող է էականորեն բարձրացնել ապակենտրոնացման մակարդակը երկրում:

Եզրակացություններ բաժնում զետեղվել են հետազոտության արդյունքները և կատարվել առաջարկություններ տեղական ինքնակառավարման համակարգի արդյունավետության բարձրացման ուղղությամբ: Մասնավորապես՝

1.Հայաստանի Հանրապետությունում տեղական ինքնակառավարման համակարգի արդյունավետությունը գնահատելու և համակարգի տարեկան գործունեության համապարփակ և մեթոդական գնահատումը իրականացնելու նպատակով, առաջարկվել է Հայաստանի Հանրապետությունում կիրառել մշակված տեղական ինքնակառավարման գնահատման համաթվի մեթոդաբանությունը:

2.Տեղական ինքնակառավարման արդյունավետության բարձրացման հաջորդ կարևորագույն ուղղությունը համարելով վարչատարածքային բարեփոխումները, միջհամայնքային համագործակցության խորացումն ու զարգացումը և համայնքների խոշորացման գործընթացի պատշաճ կազմակերպման շարունակականությունը, ինչպես նաև կարևորելով մինչ համայնքների խոշորացումը համայնքների կարծիքը լսելու պետության պարտավորության պատշաճ կատարման ապահովումը, առաջարկվել է՝ «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքով համայնքների կարծիքը լսելու համար հստակ գործիքակազմերի և կառուցակարգերի սահմանումը:

Միաժամանակ, հաշվի առնելով ընթացող վարչատարածքային բարեփոխումների ծավալները, առաջարկվել է համայնքների խոշորացման քաղաքականության իրականացման գործող տեմպերը նվազեցնել և իրականացնել կոնկրետ ոլորտային ներդրումներ նոր ձևավորված համայնքների կարողությունները մեծացնելու և հզորացնելու նպատակով: Նախ և առաջ ապահովելով խոշորածավալ բարեփոխման արդյունքում արդեն իսկ ձևավորված համայնքներում տեղական ինքնակառավարման կայունությունը, հաշվարկելով դրանցում արձանագրված հաջողություններն ու ռիսկերը, և ապա նոր անցում կատարել խոշորացման հաջորդ գործընթացների իրականացմանը:

3. Ֆիսկալ ապակենտրոնացման ուղղությամբ գերակա խնդիրներ համարվող համայնքի ֆինանսական անկախության աստիճանի բարձրացմամբ պայմանավորված, առաջարկվել է կիրարկել ՀՀ բյուջետային համակարգի օրենսդրությամբ սահմանված հարկերից և վճարներից մասհանումների կատարման դրույթները, ինչպես նաև ապահովել համայնքային բյուջեների մուտքերի կայունությունը և բազմազանությունը, համապատասխան օրենսդրական և գործնական կառուցակարգերի վերանայման և կիրառման պայմաններում բարձրացնել համայնքներում հանրային ֆինանսների կառավարման, ինչպես նաև ֆինանսական հսկողության և վերահսկողության արդյունավետության, թափանցիկության, հաշվետվողականության և օրինականության մակարդակը: Բացի այդ, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածով համայնքի բյուջեի ձևավորման աղբյուրներում նշվում են նաև վարկերն ու փոխառու միջոցները, իսկ «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասը հստակ սահմանում է, որ պետական և համայնքների բյուջեները հիմնվում են

ֆինանսական, դրամավարկային և հարկային միասնական պետական քաղաքականության վրա, առաջարկվել է ապահովվել նշված երկու օրենքների դրույթների կիրարկումը, ինչպես նաև փոփոխություններ կատարել ՀՀ բանկային համակարգը կարգավորող օրենսդրությունում, բանկային կանոնադրություններում, որով ՀՀ համայնքները կճանաչվեն որպես գործունակ, պարտավորութունները պատշաճ ստանձնող, տնտեսական և ֆինանսական հնարավորություններ ունեցող սուբյեկտներ և դրանով իսկ հնարավորություն կընձեռվի համայնքներին ստանալու փոխառու և վարկային միջոցներ: Այդ միջոցների ներգրավվման պայմաններում հնարավոր դարձնելով համայնքային միջնաժամկետ և երկարաժամկետ ծրագրերի իրականացումը:

4. Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ տեղական ինքնակառավարումը և դրա իրականացումը ենթադրում է հանրային ծառայությունների մատուցում համայնքի բնակչությանը և դիտարկելով համայնքների խոշորացման համատեքստը, առաջարկվել է ավելացնել ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների ծախսերի տեսակարար կշիռը ՀՀ համայնքների բյուջեների ընդհանուր ծախսերում, դրանով իսկ ապահովելով բնակչության հասանելի ծառայությունների շրջանակի մեծացումը և հետևաբար տեղական ինքնակառավարման արդյունավետությունը: Միաժամանակ, անժխտելի համարելով տեղական ինքնակառավարման մարմինների մարդկային որակյալ կարողությունների կարևորությունը լիազորությունների իրականացման և ծառայությունների մատուցման տեսանկյուններից, առաջարկվել է մշակել և ներդնել համայնքների աշխատակազմերի օպտիմալ կառուցվածքների մոդելներ, մասնավորապես՝ խոշորացման համատեքստում աշխատակազմերում դիտարկելով ծառայություններ մատուցող մասնագետների (գյուղատնտեսի, անասնաբույժի, հողաշինարար և այլն) հաստիքների ներգրավվումը:

5.Կարևորելով միջհամայնքային համագործակցության դերը տեղական ինքնակառավարման համակարգի զարգացման հարցում, առաջարկվել է միջհամայնքային համագործակցությանը զարկ տալ Հայաստանի Հանրապետությունում ընթացող համայնքների խոշորացման գործընթացի ավարտից հետո, քանի որ շատ համայնքներ, որոնք համարվում են կամ կարող են համարվել որևէ միջհամայնքային միավորման անդամ, համայնքների խոշորացման արդյունքում կորցնում են իրենց կարգավիճակը և հետևաբար այլևս չեն կարող սուվերեն կարգով հանդիսանալ որպես միջհամայնքային համագործակցության սուբյեկտ: Ի լրումն վերոնշյալի, առաջարկվում է համատեղ ծառայությունների մատուցումը, համատեղ վարչարարության իրականացումը և ծառայությունների վաճառքը կազմակերպելու և իրականացնելու նպատակով օրենսդրական մակարդակով կարգավորել միջհամայնքային համագործակցությունը, ոչ միայն արդեն իսկ ընդունված «Միջհամայնքային միավորումների մասին» օրենքով ընձեռնված գործիքակազմերի միջոցով, այլ բացի այդ սահմանելով միջհամայնքային համագործակցության տիպային այլ կարգավիճակներ ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, մասնավորապես հիմնադրամների և հասարակական

կազմակերպությունների միջոցով միջհամայնքային համագործակցություն ձևավորելու հնարավորություն ստեղծելով:

6.Հայաստանի Հանրապետությունում իրականացվող վարչատարածքային բարեփոխումներին պետք է հաջորդեն մարզպետի և մարզպետարանի ինստիտուտի հետ կապված բարեփոխումները: Համայնքների խոշորացմամբ ձևավորված փոքրաթիվ համայնքների արդյունքում, առաջարկվել է արմատական վերափոխումներ իրականացնել մարզպետարանի կառավարչական գործառույթների մասով, մասնավորապես լիազորությունների ապակենտրոնացման արդյունքում, մարզպետարանին պետք է վերապահվեն ռեգիոնալ ծրագրային գործառույթներ, որպեսզի մարզպետարանը, որպես տարածքային կառավարման մարմին իրագործի մարզի ռեգիոնալ զարգացումն ու դրա ապահովվումը, ինչպես նաև առաջարկվել է օրենքով միայն մարզպետարաններին վերապահել իրավական և մասնագիտական հսկողության լիազորությունները, դրանով իսկ երկրում ստեղծելով վարչական հսկողության մի մակարդակ:

7. ՀՀ համայնքային տնտեսական ներուժը գնահատելու նպատակով, առաջարկվել է ուսումնասիրել և վերլուծել առկա վիճակը, գույքագրել գույքի նկատմամբ գրանցում չունեցող համայնքների թիվը և գործուն քայլեր ձեռնարկել համապատասխան իրավունքի պետական գրանցումները իրականացնելու և համայնքային հաշվեկշիռներում ներառելու նպատակով: Միաժամանակ առաջարկվել է գույքագրել ՀՀ համայնքների սեփականություն համարվող շենքերը, շինությունները և գնահատել դրանց ֆիզիկական վիճակը, ինչպես նաև հետևողական աշխատանքներ տանել՝ վերացնելու տեղական հարկերի, տուրքերի և վճարների տվյալների բազաների անճշտությունները և թերությունները, ուժեղացնելու հարկային վարչարարությունը, ավելացնելու դրանց գանձման մակարդակը:

8. ՏԻՄ-երին վերապահված լիազորությունները արդյունավետ և կանոնակարգված իրականացնելու նպատակով առաջարկվել է սահմանել համայնքային ծառայությունների մակարդակի կառուցակարգեր՝ ծավալի, որակի և արդյունավետության չափորոշիչներ և նորմատիվներ, մասնավորապես՝ օրենքի կամ կառավարության որոշմամբ սահմանված կարգի տեսքով ընդունել ՏԻՄ-երի պարտադիր խնդիրների լուծման նպատակով սահմանված սեփական և պետության կողմից պատվիրակված լիազորությունների իրականացման շրջանակային բնույթ կրող կարգեր:

9. Արդյունավետ գործող տեղական ինքնակառավարման համակարգ ունենալու և համայնքների ներդաշնակ զարգացումն ապահովելու համար, նրանց բևեռացման մեղմմանը և ֆինանսական հնարավորությունների առկա տարբերությունները նվազեցնելու նպատակով, առաջարկվել է կազմակերպել և իրականացնել լիազորությունների ապակենտրոնացում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ համայնքների միավորման և դրանց կարողությունների ամրապնդմանը միտված վարչատարածքային վերջին բարեփոխումները արդեն իսկ ստեղծում են բավարար հիմքեր ՏԻՄ-երին նոր լրացուցիչ հանրային ծառայություններ մատուցող լիազորություններով օժտելու համար:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլվել են հեղինակի հետևյալ գիտական հոդվածներում՝

1. Սարգսյան Ա.Կ., ՀՀ տեղական ինքնակառավարման արդյունավետության հիմնական բնութագրիչները, «Այլընտրանք» գիտական հանդես, #3, հուլիս-սեպտեմբեր, 2017, էջ 33-42:
2. Սարգսյան Ա.Կ., Հայաստանի վարչատարածքային բաժանման նոր համակարգի ձևավորումը, «Բանբեր ՀՊՏՀ» գիտական հանդես, 4(48)/ 2017, էջ 95-101:
3. Սարգսյան Ա.Կ., ՀՀ վարչատարածքային բաժանման և տեղական ինքնակառավարման համակարգի բարեփոխումները, «Ֆինանսներ և էկոնոմիկա», 7-8 (203-204) 2017, էջ 4-7:
4. Սարգսյան Ա.Կ., Միջհամայնքային համագործակցության ձևավորումը և զարգացումը: Համայնքների խոշորացում, «Այլընտրանք» գիտական հանդես, #4, հոկտեմբեր-դեկտեմբեր, 2017, էջ 393-402:
5. Սարգսյան Ա.Կ., Տեղական ինքնակառավարման դասիչավորման միջազգային փորձը, «Հանրային կառավարում» գիտական հանդես թիվ 5/2017, էջ 55-60:
6. Սարգսյան Ա.Կ., Տեղական ինքնակառավարման համակարգը և նրա առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում, «Ֆինանսներ և էկոնոմիկա», #11-12 (207-1208) 2017, էջ 4-7:

АРСЕН КАРЕНОВИЧ САРГСЯН

ПРИОРИТЕТНЫЕ НАПРАВЛЕНИЯ ПОВЫШЕНИЯ ЭФФЕКТИВНОСТИ МЕСТНОГО САМОУПРАВЛЕНИЯ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.02 - «Экономика, управление хозяйством и его свери»
Защита диссертации состоится 7-го июня 2018г. в 14^{00} часов, на заседании специализированного совета 014 ВАК РА по экономике, действующего в Армянском государственном экономическом университете по адресу:

0025, г. Ереван, ул. М. Налбандяна 128.

РЕЗЮМЕ

Цель и задачи исследования:

Целью исследования является разработка путей, подходов и приоритетов развития сектора на основе изучения системы местного самоуправления, процесса ее реализации и результатов. Для достижения этой цели были определены и решены следующие вопросы:

- Изучить и проанализировать систему местного самоуправления Республики Армения, законодательную и процессуально-правовую базу.
- Определить и оценить текущее состояние местного самоуправления в Армении и ее особенности.
- Проанализировать механизмы и инструменты для оценки эффективности системы местного самоуправления.
- Проанализировать международный опыт методологии местного самоуправления и возможности его локализации в Армении.
- Анализировать и оценивать эффективность системы местного самоуправления в Республике Армения.
- Проанализировать и оценить процесс реформирования административно-территориального деления и местного самоуправления Республики Армения, а также возможности и тенденции развития системы.
- Определить приоритеты для повышения эффективности местного самоуправления, а также подходов институциональной реформы.

Научная новизна исследования

Результаты исследования имеют теоретическую, методологическую и прикладную направленность, научная новизна которых заключается в следующем:

- Проанализирован процесс формирования системы местного самоуправления в Республике Армения и выявлены тенденции и особенности ее развития.

- Принимая во внимание международный опыт, индекс оценки эффективности местного самоуправления был скорректирован с целью определения эффективности системы местного самоуправления Республике Армения в 2015-2016гг.
- Было обосновано и предложено значительное количество необходимых передающих полномочий, направленных на надлежащее осуществление права местного самоуправления, в результате чего в стране повысится уровень децентрализации местного самоуправления.
- Для обеспечения надлежащей организации и осуществления административных реформ, а также с целью полного осуществления конституционной нормы были разработаны соответствующие системы управления с участием населения и предложены соответствующие варианты для выражения мнения общественности в соответствии с Законом РА «Об административно-территориальном делении Республики Армения».
- В контексте расширения общин были разработаны новые механизмы предоставления дополнительных услуг, в результате применения которых станет возможным расширение и доступность круга общественных услуг предоставляемых обществом.

Теоретические и методологические положения, закрепленные в тезисах, анализе, выводах и рекомендациях, сделанных исследованием, могут быть применены к местному самоуправлению и, в целом, к дальнейшему развитию системы, а также в процессе научного обучения.

ARSEN KAREN SARGSYAN

PRELIMINARY DIRECTIONS OF LOCAL SELF-GOVERNMENT EFFICIENCY IN THE REPUBLIC OF ARMENIA

The abstract of the thesis for receiving the degree of Doctor of Economics in the specialty 08.00.02–"Economics, Management of the Economy and its Spheres''.

The defense of the thesis will take place on June 7, 2018, at 14^{00} o'clock, at 014 Council of Economics of SCC RA at Armenian State University of Economics:

128 Nalbandyan str., Yerevan, 0025.

ABSTRACT

The purpose and objectives of the research:

The purpose of the research is to develop the ways, approaches and development priorities of the sector based on the studies of the local self-government system, the process of its implementation and results. The following objectives have been addressed and resolved in order to achieve this goal:

- To study and analyze the local self-government system of the Republic of Armenia, legislative, procedural and legal basis.
- To identify and evaluate the current state of local self-government in Armenia and its peculiarities.
- Review the mechanisms and tools for evaluating the effectiveness of the local self-governance system;
- Analyze the international experience of local self-governance methodology and its localization opportunities in Armenia.
- Analyze and evaluate the effectiveness of local self-government system in the Republic of Armenia;
- To analyze and evaluate the process of reforming the administrative-territorial division and local self-government of the Republic of Armenia as well as the possibilities and trends of the system development.
- To identify the priorities for improving the effectiveness of local self-government, as well as institutional reform approaches.

Scientific novelty of the research

The results of the research have theoretical, methodological and applied orientation, the scientific novelty of which is as follows:

- The process of formation of the local self-government system in the Republic of Armenia has been summarized and its tendencies and peculiarities were identified.
- Taking into account the international experience, the local self-governance efficiency assessment index has been adjusted by calculating the effectiveness of the local self-government system in 2015-2016.
- A substantial number of required transmittal of powers aimed at the proper realization of the right of local self-government was substantiated and suggested, as a result of which the level of decentralization of local self-government will rise in the country.
- Relevant participatory management systems have been developed to ensure proper organization and implementation of administrative reform, as well as full implementation of the constitutional norm, to propose appropriate options for listening to community opinion according to RA Law on "Administrative and Territorial Division of the Republic of Armenia".
- In the context of community enlargement mechanisms have been developed to provide new public service additional services, which would increase the scope and accessibility of public services provided by the community.

The theoretical and methodological provisions fixed in the thesis, the analysis, conclusions and recommendations made by the research can be applied to the local self-governance and, in general, for further development of the system, as well as in the scientific-learning process.